6069



ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ԵՒ

# ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՕՄԻՏԷԻ ՀԱՇԻՒԸ

1919 ԵՐԵՒԱՆ

9(47.925)
Ա - 86

Տպ. „Աշխատաւոր" Թիֆլիս

6089

30 AUG 2011

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ

323.1:325
Հ-24

9(47.925)
Ա-86

26 SEP 2006

15 JAN 2010

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

ԵՒ

## ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ԿՈՄԻՏԷԻ ՀԱՇԻՒԸ

1919 ԵՐԵՒԱՆ

1934 Թ.

Տպ. „Աշխատաւոր“ Թիֆլիս

ՀՀ ԳԱ 2015

943 Ա Ֆ

ՀՍՍՀ-Ա.ԳԱ.ССР

943 - 93

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Արևմտահայ երկրորդ համագումարի

Արևմտահայ երկրորդ Համագումարի առաջին պաշտօնական նիստը տեղի ունեցաւ Երևանի մէջ 1919 թ. փետրուարի 6-ին, Ազգային Հանրապետութեան խորհրդարանի դահլիճին մէջ։

Արևմտահայ Համագումարի մը անհրաժեշտութիւնը հրամայական էր դարձեր գերմանօ-թիւրքական բանակներու ընդհանուր նահանջէն յետոյ և առաւելապէս փախստական հայութեան կատարելապէս անկազմակերպ վիճակին պատճառով քաղաքական կօշմարին վերացումը կը բանար նոր հորիզոններ ամբողջ հայութեան առջև ընդհանրապէս և արևմտահայութեան առջև մասնաւորապէս։

Ատոր կը զուգադիպէր փախստականութեան անկազմակերպութիւնը, որու շնորհիւ անկարելի կըլլար ոչ ձևով շարունակել ընդհատուած աշխատանքները և վայրկենին համապատասխան դիրք մը բռնել մեր հին և նոր դատին պաշտպանութեան ի խնդիր։ Ահա այս ընդհանուր վիճակին մէջ տեղի ունեցան շարք մը խորհրդածութիւններ, որոնցմէ յետոյ յաջողեցաւ 1918 թ. դեկտ. 19-ին ընտրել համագումար հրաւիրող կազմակերպիչ կոմիտէ մը, որուն վերայ պարտականութիւն դրուեցաւ ամենակարճ ժամանակին մէջ հրաւիրել Արևմտեան Հայաստանի փախստական հայութեան երկրորդ համագումարը։

Համագումարի կազմակերպիչ կոմիտէի աշխատանքներու մասին քանի մը խօսք ըսելով, հնարաւոր կըլլայ աւելի պարզ և հասկանալի կացուցանել համագումարի ընոյթը, տրամադրութիւնն ու որոշումները։

Համագումարի օրակարգը կամփոփէր հետևեալ երեք կէտերու մէջ։

1. Արևմտեան Հայաստանի գաղթական հայութեան քաղաքական դիրքերու ձևակերպումն եւ արտայայտութիւնը։

2. Արեւմտեան Հայաստանի գաղթական հայութեան ներգաղթի խնդիրը եւ կազմակերպութիւնը։

3. Արեւմտեան Հայաստանի գաղթական հայութեան ներկայացուցչական եւ հաւատարդար կոմիտեի ընտրութիւնը։

Համագումարը պէտք է լիներ ժողովրդական ներկայացուցչութիւն, այդ իսկ պատճառով կազմակերպիչ կոմիտէն որոշած էր ընել ռամկավար ընտրութիւն՝ երկաստիճան ձեւով։ Համագումարին հրաւիրուած էին Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, գեներալ Անդրանիկը, Արեւելեան Հայաստանի հասարակական ու պետական հաստատութիւնների ներկայացուցիչները, նաեւ դաշնակից պետութիւնների Թիֆլիսի ներկայացուցիչները։

Համագումարին օրակարգը, ընտրական ձեւը և հրաւիրուած հաստատութիւնները անհրաժեշտօրէն համագումարը կը դարձնէին քաղաքական հաստատութիւն մը, որ առանց անտես առնելու փախստականութեան ճգնաժամային վիճակը, ամենէն աւելի և ամենէն առաջ պէտք է զբաղուէր Արեւմտեան Հայաստանի փախստական հայութեան քաղաքական նպատակներու ձեւակերպման խնդրով։

Կազմակերպիչ կոմիտէն մեծ ջանքեր էր թափած համագումարին հրաւիրելու նաեւ նախկին Արեւմտահայ և Ապահովութեան Խորհուրդները, թէ մասնաւոր նամակներով և սուրհանդակով և թէ Թիֆլիզի և Երեւանի թերթերուն ուղղած բաց նամակներով։

Կազմ. կոմ.-ի դիմումին վրայ Արարատեան Հանր. Խորհրդարանը միաձայնութեամբ քւէարկած էր 35,000 ռուբլիի վարկ մը համագումարի ծախսերուն համար։

Համագումարին բացումը նշանակուած էր 1919 թւի յունուարի 25-ին. սակայն շրջաններէն ստացած դիմումներուն համաձայն կազմակերպիչ կոմիտէն բացումը յետաձգեց տասն օրով։

Փետրուարի 4 ին արդէն Երեւան էին հասեր պատգամաւորներու մեծ մասը, այնպէս որ նոյն օրը երեկոյեան նշանակուեցաւ առաջին նախապատրաստական նիստը։ Թէ այս առաջին և թէ յաջորդ օրը կայացած երկրորդ նախապատրաստական նիստին մէջ պատգամաւորները ծանօթացան կազմակերպիչ կոմիտէի աշխատանքներուն և կատարեցին շարք մը նախնական աշխատանքներ։ Երկրորդ նախապատրաստական նիստին մէջ որոշուեցաւ, որ համագումարը պէտք է ունենայ երեք նախագահներ և գաղտնի քւէարկութեամբ ընտրուեցան պ.պ. Գրիգոր Բալկարցի, Վարազդատ Ցէրոյեան և Վահագն Քրմոյեան։ Նոյն ժողովին ընտրուեցան նաեւ երեք քարտուղարներ՝ Ա. Կիտուր և Յ. Վարդապետեան, երեք հոգիէ կազմուած մանդատային յանձնաժողովը ինչպէս նաեւ համագումարի կանոնադրութեան համաձայն յանձնաժողովներու չորս նախագահները.

1. Շրջաններէն եկած զեկուցումներուն յանձնաժողով.
2. Քաղաքական յանձնաժողով,
3. Ներգաղթի յանձնաժողով
4. Հաշուեյարդար և կազմակերպչական յանձնաժողով։

Այդ ժողովին մէջ որոշուեցաւ նաեւ հրաւիրել խորհրդակցական ձայնով ինը հոգի, որոնք պէտք է նպաստէին համագումարի աշխատանքներուն։

Համագումարի բացման նիստը տեղի ունեցաւ փետրուարի 6-ին ժամը 12-ին։ Համագումարի նախագահներէն պ. Գր. Բոլկարացիի բացման խօսքէն յետոյ գերապատիւ Տ. Գէորգ Եպիսկոպոս Զէօրէքչեանը կարդաց Ամենայն Հայոց վեհափառ կաթողիկոսի օրհնութեան կոնդակը, որու պատճէնը կը ներկայացնենք հոս։

---

## ՊԱՏՃԷՆ

## Ամենայն Հայոց Վեհ. Կաթուղիկոսի Օրհնութեան կոնդակի

Գէորգ ծառայ Յիսուսի Քրիստոսի և Անհասանելի կամքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս Ամենայն Հայոց Մայրաքաղաքն Պատրիարք Համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի Մեծարոյ անդամոց Բ. Համագումարի կազմակերպութեանց Հայոց Տաճկական Հայաստանի, սիրեցեալ որդւոց Մերոց հոգեւորաց, հարազատից մօրս մերոց լուսոյ Ս. Էջմիածնի, ողջոյն և օրհնութիւն Հայրապետական առատացեալ ծաւալեսցի ընդ Ձեզ ընդ ամենեսեանդ։

Խնդամիտ սրտիւ հասու եղաք ի ձեռն Ատենապետի Կազմակերպիչ Յանձնախմբի Համագումարիդ, յառանձինն ունկընդրութեան, եթէ ի մօտոյ, ունի գումարել Բ. Համագումար գաղթական ներկայացուցչաց Տաճկական Հայաստանի յԵրեւան, առ ի խորհել զպիտոյից և զկարեաց հայորեբաց, որք ասա առ մեզ

կան պատասխարեալ յամաց հետէ և որ ըստ ներման հանգամանաց ունին կրկին դարձ առ հայրենին իւրեանց առնել յարկս և ի շէնս յաւանս և ի քաղաքս։

Սիրա Հայրապետս Հայոց աւլցեալ է յայդ խորհուրդ բանաւոր ուրախութեամբ և յսկզբանն իսկ գումարել խորհրդակցութեանց զմերս առաքեալք Հայրական Ջերմագին խնդակցութիւն, ընդ օրհնութեանցս ի ձեռն առանձինն ներկայացուցչի մերոյ Գերապատիւ Տ. Գէորգ Եպիսկոպոսի, մաղթանօք սրտի ցանկանալով տեսանել ի գումարմանդ Հին և խարիսխ բարօրութեան ազգայի մօտաւորի, յոր ամենեքեանս կամք յուսացեալ և ակնկալու։

Ուրախ եմք յայս ձեռնարկութիւն կարևոր, նա զի յուսալ յուսամք եթէ խոհական և շրջահայեացն խորհրդակցութիւն ներկայացուցչաց որդւոց Մերոց, սիրելեաց անշուշտ ունի դառնալ ելս հնարից, արդիս իսկ մշակել մօտաւորն կարելիութեամբ զոհմանս լուծման խնդրոց, որք հային առ կրկին դարձ յաշխարհն Ձեր և ի հայրենիս մեր անկազուտ դարևոր, ի բարւոքումն արնտեսական վիճակի, ի կրկին շինութիւն աւերեալ տանց, ի կանգնումն աշխարհին, զորս յակամայս լրիք և այլն զուղի ներքին կազմակերպութեան Հայրենեացդ ծրել, զի մի զանդաղասցին ընթացք կարևոր բարեկարգութեանց ի դառնալն Ձեր յերկիր և յաշխարհ, որ ծնաւն և սնաւն զՁեզ ամենեսեանսդ։

Արդ յուշ ածեմք Ձեզ ամենեցունցդ լինել պատկառ մեծի գործոյս, որ առալի Ձեր ամենեցունցդ զնէ զվերաշինութեանն խնդիր մերոց Հայրենեաց, լինել զգաստ և բարեխոհ մէն մի անդամոյ, յոյդ ձեռն ունի արգասաւորել զլուծումն խնդրոյդ։

Օ՜ն, զաչ իւրաքանչիւր ումէքի Ձէնջ ի մահ արօրից հանրական կենցաղականին բարօրութեան, ի ծրել զակօս Պիտանի առի արկանել սերմն բարի, առաք և առատաբեր, զի և մեք յերեկոյացեալ հասակիս տեսանել տեսանեմք զբարեբաստիկն վիճակ մերոց Հայրենեաց և Ձեզ ամենեցունցդ լինել վկայք ակնատեսք, եթէ Տէր փրկէ կրկին զժողովուրդ իմ ի տառապանաց և սրբէ զարատաուս վշտակրութեանցս։

Այլ Տեառն հովանի Ձեզ ամենեցունց, օրհնութիւն մեր Հայրական առ ամենեսեանսդ։ Ամէն։

Ի 9/22 Յունուարի 1919 ամի
Ըստ տոմարիս ՌՅԿԸ
Ի Հայրապետութեան Մերում Ը.ամի
Աբրահամեան Մ.Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 7.

Իսկականի վրայ ստորագրած
Գէորգ Ե. կաթ.
Ամենայն Հայոց

---



Անկէ յետոյ հանրապետական կառավարութեան նախագահ պ. Յ. Քալաշեանցն յայտնեց իր կառավարութեան ցանկութիւնը վերացած տեսնել այս համագումարով հայութեան հաւատածական բաժանումը։ Խորհրդարանի ներկայացուցիչ պ. Ս. Վրացեանը խօսեց նոյն մտքով։ Այնուհետև խօսք առին բարձրապատիւ Տ. Կորիւն վարդ. Սահակեանը պ.պ. Ս. Թոփալեանը, Ե. Յարութիւնեանը, Ա. Տէր Յակոբեանը և Ա. Խաչիկեանը։ Համագումարի նախագահներէն պ.Վարազդատ Տէրոյեանը կարդաց ճառ մը համագումարի աշխատանքներու մասին, իսկ պ.Վ. Քրմօեանը յարգանքի խօսքեր ուղղեց մեռնող ժողովրդի, նահատակուած հասարակական գործիչներու և պանծալի հերոսներու յիշատակին։ Ըստ մէկ յետոյ կարդացուեցաւ ողջոյնի և շնորհաւորութեան շարք մը գրութիւններ, որոնցմէ հոս կը բերենք գեներալ Անդրանիկի, Հ. Յ. Դաշնակցութեան, Արևմտեան Հայաստանի կենտ. կոմիտէի և Հայ Ռամկավար Կուսակցութեան Երևանի շրջանային վարչութեան նամակներու պատճէնները։

---

## ՊԱՏՃԷՆ

## Գեներալ Անդրանիկի նամակին

Արևմտահայ Բ. Համագումարի կազմակերպիչ կոմիտէին

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր № 16 գրութիւնը։

Մտածելով որ չեմ կրնար այդ Համագումարին մասնակցելով օգտակար դառնալ և թեթևացնել Ձեր աշխատանքները, ուստի հրաժարւում եմ ներկայ լինել այդ Համագումարին։

Ձեզ կատարեալ յաջողութիւն կը ցանկամ։

25 յունուար 919 թ.

Իսկականի վրայ ստորագրած
Անդրանիկ

---

## ՊԱՏՃԷՆ

## Հ. Յ. Դաշնակցութեան Արևմտեան Հայաստանի Կենտր. Կոմիտէի նամակի։

Արևմտահայութեան Բ. Համագումարի
Նախագահութեան

Սրտի անհուն բերկրանքով կողջունենք Արևմտահայութեան Բ. Համագումարը։

կը ցանկանայինք, որ իբրև Արևմտահայութեան Համագումարը սա վերջինը լինէր, և յառաջիկային Ազատ և Միացեալ Հայաստանի մէջ բոլոր հայերը հնարաւորութիւն ունենային միասին աշխատելու և հաւաքաբար համագումարներ կազմակերպելու։

Լիայոյս ենք, որ Համագումարը իւր բոլոր ջանքերը կը լարէ այդ ուղղութեամբ, թէ որոշումներ կայացնելով և թէ գործնական քայլեր առնելով։

Թող վերջանան հայութիւնը բաժանող սահմանները,
Կեցցէ Ազատ և Միացեալ Հայաստանը։

Հ. Յ. Դաշ. Արեւմտեան Հայաստանի Կենդր. Կոմիտէ։
1919, փետր. 6, Երևան։

---

## ՊԱՏՃԷՆ

## Հայ Ռամկավար կուսակցութեան Երևանի Շրջանային Վարչութեան նամակին։

Արեւմտահայ Բ. Համագումարի
Ցարգոյ Նախագահութեան

Հայ Ռամկավար կուսակցութիւնը որպէս մին հայ ժողովրդի ազատագրութեան համար աշխատող քաղաքական կազմակերպութիւններէն ներկայ պատմական վարկեանին, երբ մարմին են առած տասնեակ տարիներու մեր իդեալները ու մենք կը գտնուինք նոր կեանքի շէմքին, սրտի առանձին զոհունակութեամբ կուգայ շնորհաւորել ազատագրուած հայրենիքի, ազատագրուած թէև վտարանդի, զաւակներու այս առաջին ազատ համագումարը և յոյս ունի, որ համագումարը կը յայտնէ իր միաձայն ցանկութիւնը այն հարցի մասին, որ մեր կուսակցութեան գերագոյն նպատակն է եղած՝ տեսնել հայութեան չար հողմով ցիր ու ցան հատուածները՝ քով-քովի, հայրենի հողին վրայ և մէկ ու անբաժան պետական միաւորի մէջ։

6 փետր. 1919, Երևան։

Հ. Ռամկ. Կուսակցութեան Երևանի Շրջ.
Վարչութիւն (կնիք)։

---



Ասոնցմէ զատ ողջոյնի գրութիւններ էին ղրկած նաև եղիդներու ցեղապետ Զահանգիր աղա և Թէյֆուր բէկ, Արևմտահայ Ուսուցչական Միութեան կենդրոնական և Երևանի վարչութիւնները, «Աշխատանք» և «Վան-Տոսպ» թերթերու խմբագրութիւնները, Հայաստանի հրատարակչական կոօպերատիւ վարչութիւնը, բժ. Զալեան-Մանուկեանը և այլք։

Այս առաջին պաշտօնական նիստէն յետոյ համագումարի նիստերը տեղի ունեցան Երևանի քաղաքային խորհրդարանի դահլիճին մէջ, ամեն օր ժամը 4—8, կէսօրէն յետոյ և աշխատանքները վերջացան փետրուար 13-ին։ Այս ժամանակամիջոցի ընթացքին նիստ տեղի չունեցաւ միայն փետր. 9-ին, որովհետև յանձնաժողովները չէին վերջացուցած իրենց աշխատանքները։

Այնպէս որ համագումարն ունեցաւ երկու նախապատրաստական, մէկ բացման և վեց պաշտօնական նիստեր, առանց հաշուելու յանձնաժողովներու բազմաթիւ նիստերը։

Համագումարի առաջին պաշտօնական նիստին մէջ ժանդաստային յանձնաժողովը հետևեալ ձևով ներկայացուց համագումարին կազմը։

I. Երեւան 31,700 փախստական—8 պատգամաւոր. պ. պ. Հայկակ Կոսոյեան, Զաւէն Կորկոտեան, Հայրապետ Հայրապետեան, Հրանտ Կարինեան, Ռուբէն Շատուրեան, Եփրեմ Ալէքսանեան, Մանուէլ Մալոյեան, Աբրահամ Աւետիսեան։

II. Էջմիածին 42,600 փախստական—3 պատգամաւոր. Տէր Եղնիկ վրդ. Ներկարարեան, Յակոբ Մազոյեան և Վահան Համբարձումեան։

III. Աշտարակ 12,880 փախստական—2 պատգամաւոր. Գարեգին Ոսկերչեան և Ռուբիկ Թերլեմեզեան։

IV. Դարաչիչակ 23,750 փախստական—5 պատգամաւոր. Տաճատ Ղիմոյեան, Շաւարշ Բասենցեան, Տաճատ Թերլեմեզեան, Մկրտիչ Մանուկեան, Համազասպ Աբրահամեան։

V. Կրգ Բուլաղ 17,570 փախստական—5 պատգամաւոր. Արշակ Մանուկեան, Շարան Շարանբէյեան, Արծրուն Ղուկասեան, Սիմէոն Գալատեան, Յովակիմ Շահբազեան։

VI. Սուրմալու 25,700 փախստական—4 պատգամաւոր. Արտաշէս Միրզոյեան, Օրման Ղորղանեան, Թէյֆուր բէկ և Թէմուր աղա։

VII. Միլլի-Դարա 10,670 փախստական—1 պատգամաւոր. Անդրանիկ Մխիթարեան։

VIII. Ալեքսանդրոպոլ 10,000 փախստական—1 պատգամաւոր. Սեղրակ Խալոեան:

IX. Դիլիջան 12,000 փախստական—2 պատգամաւոր. Վարդան Աւաքեանեան, Ղևոնդ Յովսէփեան:

X. Բաշգառնի, 5000 փախստական—1 պատգամաւոր. Մուշեղ Դարմանեան:

XI. Նոր-Բայազէտ 27,923 փախստական—7 պատգամաւոր. Վահագն Քրմոյեան, Բաղդասար Աբօեան, Արսէն Խաչիկեան, Միհրան Գրիգորեան, բժիշկ Մուրադեան, Աբրամ Խոջայեան, Գառնիկ Ասլանեան:

XII. Կազմակերպիչ կոմիտեն՝ Գրիգոր Բոլկարացի, Սըմբատ Վարազդատ Տէրոյեան, Ռուբէն Դրամբեան, Արմէն Սասունի, Վաղարշակ Յոխիկեան, Յովհաննէս Մխիթարեան, Արսէն Կիսուր, Նազարէթ Բուռնուքեան:

XIII. Արեւմտահայ խորհրդի անդամներեն 2 հոգի. բժ. Գոնապարտեան, Վանփուշ.

XIV. Արարատեան Հանրապետութեան խորհրդարանի կողմէն՝ 1 հոգի. Ս. Վրացեան:

XV. Եղբայրական Օգն. գլխ. կարգադրիչ կոմիտէի կողմէն՝ 1 հոգի. Կորիւն վրդ. Սահակեան:

XVI. Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութեան կողմէն՝ 1 հոգի. Երուանդ Յարութիւնեան:

XVII. Անգլիական լորդ Մերի կոմիտէի կողմէն՝ 1 հոգի. Սարգիս Թոփալեան:

XVIII. «Աշխատանք» և «Վան-Տոսպ» թերթերու կոմիտէն՝ 1-ական հոգի. Արշաւիր Դաղանչեան, Յարութիւն Վարդապետեան:

Այսպիսով, ձայնի իրաւունքով համագումարին կը մասնակցէին 55 հոգի։ Հնարաւորութիւն չէին ունեցած ընտրութիւններուն մասնակցելու Կամարլուի, Սիսիանի և Դարալագեազի մէջ ապաստանած արեւմտահայերը:

Համագումարին կը բացակայէին Ղարաքիլիսէի երկու պատգամաւորներն ու կազմակերպիչ կոմիտէի մէկ հիւանդ անդամը:

Համագումարն անցնելով իւր բուն աշխատանքներուն ամենէն առաջ կը լսէ շրջաններէն եկած զեկուցումներու զեկուցումը յանձնաժողովի նախագահ պ. Ռուբէն Շաուրեանի կողմէն: Համագումարը մտքերու երկար փոխանակութիւն կունենայ շրջան-



ներու մէջ ապաստանած փախստական հայութեան զարհուրելի կացութեան մասին. ի վերջոյ կընդունէ սովի մասին հետեւեալ բանաձեւը:

---

## ԲԱՆԱՁԵՒ ՇՐՋԱՆՆԵՐԷՆ ԵԿԱԾ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով շրջաններէն եկած պատգամաւորներու զեկուցումներու ամփոփումը, որու հիման վրայ Հայ և Եզեդի ժողովուրդը փաստօրէն սովի ճիրաններու մէջ վերջնական բռնջնջման նախօրեակը կապրի, համագումարը կորոշէ, որ իրմէ ընտրուած մարմինը աղդու դիմումներ կատարէ դաշնակիցներու կոլկոտեան ընդհ. հրամանատարին, դաշնակից պետութիւններու համա եւրոպական կօնֆերանսին, այլ և փարիզի մէջ կազմուած մեր նոր հայկական կառավարութեան և պահանջել հաց և շուտափոյթ օգնութիւն՝ մահացող ժողովրդի համար, ինչպէս նաև յանձնարարել, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն նպաստի և խնամատարական գործը կազմակերպելու և լաւ հիմքերու վրայ դնելու:

(Ընդունուած Արեւմտահայ Բ. համագումարի նիստին մէջ 1919 թ. փետր. 8-ին)

---

Համագումարի հետեւեալ նիստին հաշուեյարդար յանձնաժողովի նախագահ պ. Զաւէն Կորկոտեանը կընէ նախկին Արեւմտահայ և Ապահովութեան խորհուրդներու գործունէութեան համառօտ պատմութիւնը և մտքերու փոխանակութիւն կատարելէ յետոյ կընդունի հետեւեալ բանաձեւը:

---

## ՀԱՇԻՒԵՑԱՐԴԱՐԻ ԲԱՆԱՁԵՒԸ

Արեւմտահայ Բ. Համագումարը լսելով հաշուեյարդար յանձնաժողովի զեկումը Արեւմտահայ նախկին մարմիններու մասին և տեսնելով, որ անոնք կազմալոյծ վիճակի մը մէջ կը գտնուին շնորհիւ այն հանգամանքին, որ 1918 թ. մայիս ամսէն ի վեր ոչ մի տեղ չեն յաջողած մնծամասնութիւն կազմել. իրենց ընտրողներուն հաւաքել և իրենց տնտեսական-բարոյական գործունէութեան հաշիւը ներկայացնել, ինչպէս նաև շնորհիւ այն հանգամանքին, որ ոչ միայն իրենց ընտրողներու մօտ չեն վերադարձած և Բ. Համագումարին չեն ներկայացած. մի բան, որ ըստ ամենայնի անոնք

հնարաւորութիւն ունէին ընելու, այլ և միայն 2—3 հոգու համաձայնութեամբ յանձնեն առած արևմտահայ փախստականութեան հանդէպ այնպիսի պարտականութիւններ կատարելու, որ երբէք իրենց վերայ դրուած չէ եղած, անոնց գումարները անձնական պատասխանատուութեամբ զանազան գործերի յատկացնելով, մի բան, որ ոչ համագումարը, ոչ կոնֆերանսը և ոչ էլ խորհուրդները չէին թոյլատրած։

Արևմտահայ Բ. Համագումարը, որպէս Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ ապաստանած փախստականութեան ներկայացուցչութիւնը կը յայտարարէ նախկին Խորհուրդները լուծուած, պահանջելով բարոյական և նիւթական հաշուետուութիւն իրենց ամբողջ գործունէութեան վերաբերմամբ թէ հաւաքականօրէն և թէ անձնապէս։

(Ընդունուած գ. նիստի. մէջ փետր. 10-ին.)

---

Ներգաղթի նախագահ պ. Արմէն Սասունի կուտայ զեկուցում մը ներգաղթի մասին և համագումարը համաձայն լինելով, որ երկաբապատում ծրագիրները չեն, որ պիտի ներգաղթը յաջողցնեն և կազմակերպեն կընդունէ հետևեալ բանաձևը։

---

## ԲԱՆԱՁԵՒ ՆԵՐԳԱՂԹԻ ՄԱՍԻՆ.

Նկատի ունենալով մօտիկ ապագային տեղի ունենալիք արևմտահայ փախստականներու ներգաղթը դէպի՝ իրենց ծննդավայրը և որ այդ ներգաղթը նպատակայարմար և արդիւնաւէտ կը լինի միայն այն ժամանակ, երբ այն կատարուի որոշ կանոնաւորութեամբ, ժողովրդի ֆիզիքական ապահովութեան անհրաժեշտ պայմաններու մէջ, Համագումարը կը հրահանգէ ընտրուելիք մարմնին այժմէն անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել պատմական Մեծայեալ Հայաստանի կառավարութեան մօտ և դաշնակիցներու ներգործօն միջամտութեամբ և աջակցութեամբ պետականօրէն ապահովելու ներգաղթող ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը և պարենաւորման անհրաժեշտ պայմանները, ինչպէս նաև անոր հետևող վերաշինութեան գործի իրականացման անհրաժեշտ ուժերները հաւաքելու։

(Ընդունուած Գ. և Դ. նիստերու մէջ 1919 թ. փետր. 10 և 11-ին.

---



Համագումարի առանցքը կազմող քաղաքական հարցը շատ երկար ժամանակ կը գրաւէ։ Քաղաքական հարցը այնքան հասունացեր էր և անոր ձեակերպումն այնքան հրամայական դարձած, որ յանձնաժողովի մէջ անգամ հարցերը կառաջարկէին պատգամաւորներու կողմէն ինքնաբերաբար և կը պահանջէին իրենց շուտափոյթ պատասխանները։ Յանձնաժողովի նախագահ բժ. Պոնապարտեանի զեկուցումէն յետոյ համագումարը երկարօրէն քննութեան և վիճաբանութեան կենթարկէ քաղաքական բանաձևի յատկապէս I, II և V յօդուածները. Յօդուած առ յօդուած քննելէն և մաս մաս քուէարկութեան դնելէն յետոյ առաջին և երկրորդ ընթերցումով ամբողջական բանաձևը քուէարկութեան կը դրուի և միաձայնութեամբ կընդունուի Համագումարի կողմէն։

Համագումարը ջերմ ծափահարութիւններով կընդունէ Արևմտեան Հայաստանի փախստական հայութեան քաղաքական իդէալներու ձեակերպման վերջնական յայտարարութիւնը և այսպիսով հրապարակի վերայ դրուած մեր դարաւոր դատի բարոյական լուծումը կուտայ ամենէն առաջ, իբրև ժողովրդական կամքի արտայայտութիւն։

---

## ԲԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՁԵՒԸ

Արևմտահայ Բ. Համագումարը քննելով Հայ ժողովրդի ներկայ կացութիւնը.

I. Սրտագին կողջունէ և կը յայտարարէ Աղտա և Մեծայեալ Հայաստանի անկախութիւնը։

II. Լիակատար վստահութիւն կը յայտնէ Աղտա և Մեծայեալ Հայաստանի Գօրս-Նուազար փաշայի Անդրանիկ Դանլիէին։

III. Կը յայտարարէ իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն համազգային հաւաքներու և երկրամասերու միաւորութեամբ։

IV. Կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմին»՝ նախարարական գանձիին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքներն, որոնց հարկաւոր են Աղտա և Մեծայեալ Հայաստանի պետական գոյութիւնը կիմաստաւորելու համար։

V. Միաժամանակ կը պարտադրէ ընտրուած «Գործադիր Մարմին» գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապե-

տութեան նախարարութեան և խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու և իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար *)։

VI. Կը պահանջէ Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը, դաշնակից պետութիւններու քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակութեամբ և աջակցութեամբ։

VII. Կը պահանջէ Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիւաղներուն Վիլհելմի, Էնվէրի, Թալէաթի, Ճեմալի, Նազիմի, Պէհաէտտին-Շաքիրի և ընկեր նահանգապետներու, կառավարիչներու և այն բոլոր ղեկավարներու զինուորական դատարանով պատժելը։

VIII. Կը պահանջէ Հայ ժողովրդի ջնջումներու ամբողջական հատուցումը ի հաշիւ օսմանեան կառավարութեան։

(Ընդունուած Դ. և Ե. նիստի մէջ, փետր. 11-ին և 12-ին)

---

Այնուհետև Համագումարին կղբաղեցնէ այն հարցը թէ ինչպիսի կազմով մարմին պէտք է ընտրել, իր որոշումները իրականացնելու համար։ Այս հարցի առթիւ կը քննարկուի և կընդունուի պ. Ռուբէն Դրամբեանի հետեւեալ բանաձեւը.

## ԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆԻ ԲԱՆԱՁԵՒԸ

Արևմտահայ Բ. Համագումարը կընտրէ ինն հոգինոց մէկ մարմին, որպէս Արարատեան Հանրապետութեան մէջ ապրող Արևմտահայ հատուածի «Գործադիր Մարմին».

I. Նա կիրականացնէ համագումարի որոշումները.

II. Կը շարունակէ մնալ իր ստանձնած պարտականութիւններու և իրաւասութեան մէջ մինչև Միացեալ Ազատ Հայաստանի պետական-օրէնսդրական հաստատութիւններու իրականացումը՝ Հայութեան միւս հատուածներու՝ Պօղոս Նուպարի կաբինետի,

*) Այս կէտին ամբողջական կուսակցութեան հինգ անդամները դէմ լինելով, պատճառաբանուած գրութիւն մը ներկայացնելով կը հեռանան դահլիճէն։



Արարատեան Հանրապետութեան կառավարութեան և խորհրդարանի գործակցութեամբ և համաձայնութեամբ։

III. Բացառիկ և համազգային արժէք ներկայացնող ոչէ դէպքի առթիւ կը հրաւիրէ սոյն համագումարն իր լրիւ կազմով, Գործադիր Մարմնի անդամներուն մէկ երրորդի կամ Համագումարի անդամներու կէսէն աւելիի պահանջմամբ։

IV. Գործադիր Մարմինը հաշուետու և պատասխանատու է Համագումարի առաջ իր գործունէութեան համար։

V. Համագումարի Բ. նստաշրջանը կը հրաւիրուի մայիս 1-ին, եթէ մինչ այդ ներդաղթը չէ կատարուած և եթէ հնարաւոր է պատգամաւորներու կէսէն աւելին հաւաքել։

VI, Գործադիր Մարմնի օրէնսդրական գործունէութիւնը կը սահմանափակուի միայն այն չափով, որ չափով որ չի հակասեր համագումարի որոշումներուն և բանաձեւերուն։

VII. Գործադիր Մարմինը կաշխատի միւս շրջաններէն եկ, որոնք զանազան պատճառներով ներկայ կազմէն կը բացակայեն, պատգամաւորներ բերելով լրացնել իր կազմը։

(Ընդունուած Զ. նիստի մէջ, փետրուար 13-ին)

---

Փետրուար 13-ին, Համագումարի վերջին նիստին մէջ գաղտնի քուէարկութեամբ կընտրուին հետեւեալ ինն անձնաւորութիւնները, իբրև Համագումարի որոշումները «Գործադրող Մարմին» պ. պ. Սմբատ Բորոյեան, Խաչատուր Պոնապարտեան, Արմեն Սասունի, Գրիգոր Բոյկարացի, Վարազդատ Տիրոյեան, Ռուբէն Դրամբեան, Վահագն Բրմոյեան, Վաղարշակ Յոխիկեան, Արսեն Կիւրտուր։

Այնուհետև նախագահութեան առաջարկով Համագումարը կը լսէ ողջոյնի նամակներու ընթերցումը։ Այդ նամակներէն հոս կը բերենք Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսին, Պօղոս Նուպար փաշային, Հաճսուրեան Կոնֆերանսին, Արարատեան Հանրապետութեան կառավարութեան և խորհրդարանին ուղղուած գրութիւնները։

---

## ԳՍՏՃԷՆ

### Նորին Սուրբ Օծութեան Տ. Տ. Գէորգ Ե. Վեհափառ Կաթուղիկոս Ամենայն Հայոց

*Վեհափառ Տէր,*

Արևմտահայ Բ. Համագումարը վերջացնելով իր աշխատանքները, սրբազան պարտականութիւն է համարում իւր որդիական խորին շնորհակալութիւններն ուղարկել Նորին Ս. Օծութեան, իւր օրհնութեան կոնդակի և բարեմաղթութիւնների առթիւ։

Համագումարը խորապէս հաւատացած է, որ հայ ժողովուրդը և նրա հաւատները մի նպատակ միայն կարող են ունենալ— տեսնել հայրենիքի անջատուած մասերը մէկ քաղաքական միաւորի մէջ և հայ ժողովուրդը մէկ հայրենիքի վրայ. այդ խոկ պատճառով համագումարը յայտնեց իր վճռական կամքն ու որոշումը իրականացնելու համար Միացեալ ազատ Հայաստանի գաղափարը և հրահանգեց ընտրուած «Գործադիր մարմնին» գործնական քայլեր առնել այդ ուղղութեամբ։

Համագումարը չի տարակուսում, որ Նորին Ս. Օծութիւնը ընդառաջ կը գնայ համազգային այդ միահամուռ կամքին ու ցանկութեան և կընդունէ մեր լիակատար վստահութեան հետ նաև մեր որդիական խոնարհ, անկեղծ յարգանքները։

---

## ԳՍՏՃԷՆ

### Հայկական պատուիրակութեան Նախագահ Նորին Վսեմափայլութեան Պօղոս Նուբար Փաշային:

Արևմտահայ Բ. Համագումարը, գումարուած Երևանին մէջ, փետրուար 6-ին, իւր սրտագին ողջոյնները կուղղէ Ձերդ Վսեմափայլութեան և իւր լիասիրտ վստահութիւնը կը յայտնէ, որ Ձեր կարող և արդիւնաւէտ գործունէութեամբ պէտք է վերջնականապէս ձեւակերպուին հայ բնաշխարհի պետական հիմքերը և հայ բազմաչարչար ժողովրդին հնարաւորութիւն տրուի աշխատել և վերստեղծել իւր հայրենի տունը։

Համագումարը տեսնելով Ձեր մէջ իւր իղձերու և ցանկու-



թիւններու լաւագոյն արտայայտիչը, յոյս ունի, որ իւր քաղաքական և ազգային ձգտումները կը ջանաք լուծել հայ ժողովրդի արհեստականօրէն անջատուած հատուածներու միաւորութեամբ և մէկ պետական-քաղաքական իրաւակարգի ստեղծմամբ։

---

## ԳՍՏՃԷՆ

### Փարիզի Միջազգային Խաղաղարար Կոնֆերանսի Նախագահութեան:

Կովկաս ապաստանած 400,000 արևմտահայութեան համագումարը կազմուած Երևանի մէջ փետր. 6-ին իւր ողջոյններն ուղղելով խաղաղարար վեհաժողովին լիայոյս է, որ իւր Դատը, որու համար անմոռանալի կորուստներ է տուեր արևմտահայութիւնը, կը լուծուի հայ ժողովուրդի իղձերու և ցանկութիւններու համաձայն և դաշնակիցներու հաւանութեամբ. հնարաւորութիւն տալով արհեստականօրէն անջատուած հայ հատուածները միանալ մէկ պետական կազմակերպութեան մէջ ազգային տնտեսական, քաղաքական, տերրիտորեալ անհրաժեշտ պայմաններու կիրառումով։

---

## ԳՍՏՃԷՆ

### Արարատեան Հանրապետութեան պ. Վարչապետին:

Արևմտահայ Բ. Համագումարը ողջունելով հայութեան մէկ հատուածի կառավարութիւնը, լիայոյս է, որ այն ևս կը միացնէ իր ձայնը Արևմտահայ Համագումարի վճռին—ունենալ մէկ հայրենիք և մէկ միացեալ ազատ Հայաստանի պետական կազմակերպութիւն։

Համագումարը գտնելով սոյն խնդիրը հայութեան համար պատմական մէկ կարևոր խնդիր. հաւատացած է, որ Արարատեան Հանրապետութեան կառավարութիւնը կը փութայ օր առաջ յայտարարել Միացեալ ազատ Հայաստանի անկախութիւնը և գործնական քայլեր առնել միացումը իրականացնելու համար կեանքի մէջ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՐԱՆ
Գ. ԵՒՈՐԳԵԱՆ
ՀԱՄԱՐ-ԱՐՈՒ
Ա. Ա. Մ. ՊՈՒՍԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌ

## ԳԱՏՃԷՆ

### Արարատեան Հանրապետութեան Խորհրդարանին:

Արևմտահայ Բ. Համագումարը ողջունելով Հանրապետութեան անդրանիկ Խորհրդարանը վստահ է, որ այն ևս իւր հեղինակաւոր ձայնը պիտի միացնէ հայութեան ամենէն շատ տանջված և զոհաբերած խոշոր հատուածի ձայնին—ունենալ մէկ հայրենիք, Միացեալ անկախ Հայաստան մէկ պետական կազմակերպութեամբ:

Համագումարը հաւատացած է, որ Խորհրդարանը չի ուշանար իր որոշումը տալու հայութեան համար խիստ կարևոր այս խնդրի մասին:

---

Առաջին նստաշրջանի փակման առթիւ կը խօսին պ. պ. Խ. Գոնապարթեան, Վ. Քրմոյեան և Վ. Տէրոյեան, որմէ յետոյ նստաշրջանը կը յայտարարուի փակված:

---

Արևմտահայ Գործադիր Մարմինը հրատարակութեան տալով Երկրորդ Համագումարի այս համառօտ տեղեկագիր-պատմութիւնը, կը կարծէ թէ, որոշ չափով նպաստած կըլլայ Համագումարի որոշումներու ժողովրդականացման և աւելի լայն խաւերու մէջ տարածման:

Արևմտահայ Գործադիր Մարմին

15 մարտի 1919
Երևան

ԿՆԻՔ



Արևմտահայ «Գործադիր Մարմինը» կազմակերպիչ կոմիտէէն ստացած լինելով անոր մէկ ու կէս ամսեան գործունէութեան հաշիւները, հետևեալ տախտակով կը ներկայացնէ անոր կատարած ծախսերու հաշուեկշիռը:

## ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

Արևմտահայ երկրորդ համագումարի կազմակերպիչ կոմիտէի
Ա. 1919 թ. յուն. 1—փետր 20-ին Երևան

| ՄՈՒՏՔ | | | ԵԼՔ | | |
|---|---|---|---|---|---|
| Հայաստանի հանրապետութեան խորհրդարանի որոշման համաձայն ստացուած է ելմտից նախարարութենէն երեսուն և հինգ հազար ռուբլի. . . | 35000 | — | Պատգամաւորներու օրապահիկ. , , . . . | 9500 | — |
| | | | Պատգամաւորներու և շրջիկ հրահանգիչներու ճանապարհածախս. . | 9518 | 50 |
| | | | Շրջանային ընտրական կոմիտէներու կազմակերպութեան . . . . . | 4491 | — |
| | | | Դիւան . . , . . . | 3421 | 80 |
| | | | Գրանենեակ. . . | 2900 | — |
| | | | Երկրորդ համագումարի նախագահութեան ծախսեր . . . . . | 682 | 50 |
| | | | Մնացած դումար *). . | 4486 | 20 |
| | 35000 | — | | 350 0 | — |

Հաշուապահ՝ Վ. Ցոխիկեան

Ատենապետ՝ Վ. Տէրոյեան

*) Մնացած դումարը՝ 4,486 ռ. 20 կ. աւելացած է շնորհիւ այն հանգամանքին, որ մի քանի շրջաններէն պատգամաւորներ կը բացակայէին և պատգամաւորներէն մի քանիսը հրաժարուեցան իրենց հասանելիք օրապահիկի և ճանապարհածախսի բաժնէն: Արևմտահայ գործադիր Մարմինը իբրև կազմակերպիչ կոմիտէի և երկրորդ համագումարի գործունէութեան և հաշիւներու անմիջական իրաւատէր, ստացեր է ամբողջական հաշիւը և աւելցած դումարը յանկացուցեր է այս տեղեկագրի և հաշուեկշռի հրատարակութեան:

ՀՀ Ազգային գրադարան
NL0194270